[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (արտադրանքների, ապրանքների առաքման)	[2] Սերիա	[3] Համար
27	Հունիս	2019 թ.		Բ	8600780203
[4] Առաքման ամսաթիվ				Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
27	Հունիս	2019 թ.		Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշիվ վավերագիրի դուրս գրման ամսաթիվ	

	Պայմանագիր	
	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար
	18 Հունվար, 2018 թ.	

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Արտադրանք, ապրանք առաքող անձի										
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	6	9	0	2	0	8	7		
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0	6	9	0	2	0	8	7	/	1

[10] Անվանումը	«ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈԳԵՆՅԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ» ՊԵՏԱԿԱՆ Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ)	
[11] Բանկային տվյալները	"ԱՄԵՐԻԱԲԱՆԿ" ՓԲԸ	N 1570015001210100
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԼՈՌԻ ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57	
[13] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են	ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57	
[14] Լրացուցիչ տվյալներ		

Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձի								
[15] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	6	3	1	2	6	3
[16] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								

[17] Անվանումը (ֆիզիկական անձի անուն, ազգանուն)	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ	
[18] Բանկային տվյալները	ՀՀ ֆինանսների նախարարության աշխակատազմի գործառնական վարչություն	N 900011000834
[19] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5	
[20] Լրացուցիչ տվյալներ		
[21] Ում միջոցով	Անուն, ազգանուն	
	Լիազորագիր — Համար	
	Լիազորագիր — Ամսաթիվ	
[22] Մատակարարման (առաքման) եղանակը		
[23] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն)	ԱՐԱԲԿԻՐ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5	

[24] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը	Ստացված դրամական միջոցներ	Ստացված հարկի գումար
1	2	3	4	5	6	7	8	9
1	Դատահոգեբուժական փորձաքննությունների փորձագիտական եզրակացություն թիվ 18152019 բ/գ,	հատ	1	39400		39400		
Ընդամենը						39400		

Առաքող՝ PIROGOVA EMMA 6805680298
(անուն, ազգանուն)

Ստացող
(անուն, ազգանուն)

27/06/2019 15:01:43

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին

13 մայիսի 2019թ. ք. Գյումրի

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ավագ քննիչ, առաջին դասի խորհրդական՝ Գևորգ Թորոյանս, քննարկելով վարույթումս քննվող 18152019 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Տ Ի

2019 թվականի փետրվարի 08-ին ժամը 18:10-ին Գյումրու հոգեկան առողջության կենտրոնից ոստիկանության Գյումրի քաղաքի Մուշի բաժին հաղորդում է ստացվել, որ «Գյումրու հոգեկան առողջության կենտրոն» ՓԲ ընկերությունում բուժվող Լիպարիտը հարվածել, գցել է գետնին կենտրոնի հերթապահ բուժքույրին՝ Քնարիկ Ասլանյանին, ով տեղափոխվել է Գյումրու բժշկական կենտրոն:

2019 թվականի փետրվարի 08-ին Գյումրի քաղաքի Անի թաղամասի 61 շենքի 33-րդ բնակարանի բնակչուհի Քնարիկ Մովսեսի Ասլանյանը հաղորդում և բացատրություն է տվել, որ փետրվարի 08-ին ժամը 17:00-ի սահմաններում ինքը գտնվել է իր աշխատավայրում՝ «Գյումրու հեգեկան առողջության կենտրոն» ՓԲ ընկերության հոգեբուժական բաժանմունքում և հերթապահությունը ընդունելուց հետո քանդելով նոր ստացիոնար բուժման ընդունված Լիպարիտ Գրիգորյանի մահճակալի ամրակապերը, ցանկացել է վերջինի ճնշումը չափել, որպեսզի հանգստացնող դեղորայք ներարկի: Ամրակապերը քանդելուց հետո Լիպարիտը գտնվել է նշված կենտրոնի երրորդ հարկի միջանցքում կքանստած վիճակում և ակնթարթորեն վեր կնեալով տեղից, մոտեցել է իրեն, գրկելով բարձրացրել է վերև և հարվածել գետնին, ինչի հետևանքով ինքը մարմնի աջ մասով ընկել է գետնին և գլխի աջ հատվածում ուժգին հարված է ստացել:

Դեպքի առթիվ 2019 թվականի փետրվարի 18-ին ոստիկանության Գյումրի քաղաքի Մուշի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով հարուցվել է թիվ 18152019 քրեական գործը և նախաքննություն կատարելու համար ուղարկվել Շիրակի մարզային քննչական վարչություն:

Նախաքննության ընթացքում 18.04.2019 թվականին Լիպարիտ Արտաշեսի Գրիգորյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «անձի հակասոցիալական խանգարում, ցնորազառանցանքային համախտանիշ, սուր փսիխոմոտոր գրգռվածություն» ախտորոշումով հաշվառված լինելով «Գյումրու հոգեկան առողջության կենտրոն» ՓԲ ընկերության հոգեբուժական դիսպանսերում և 2019 թվականի փետրվարի 08-ից գտնվելով ստացիոնար բուժման մեջ, նույն օրը ժամը 18:00-ի սահմաններում դիսպանսերի երրորդ հարկի միջանցքում կքանստած դիրքից վեր կենալով առանց պատճառի մոտեցել է հերթապահ բուժքույր Քնարիկ Ասլանյանին և նրա նկատմամբ դիտավորությամբ կատարել այլ բռնի գործողություն՝ հետևից գրկելով բարձրացրել է վերև և դիտավորությամբ հարվածել գետնին՝ վերջինիս պատճառելով առողջության թեթև

վնասի հատկանիշներ չպարունակող «գանգի փակ հյուսվածքների սալջարդի ձևով» մարմնական վնասվածք:

Որպես տուժող ճանաչված և հարցաքննված Քնարիկ Մովսեսի Ասալանյանը ցուցմունք է տվել այն մասին, որ աշխատում է Գյումրու հոգեկան առողջության կենտրոնում որպես բուժքույր: 2019 թվականի փետրվարի 08-ին ժամը 16:00-ից մինչև հաջորդ օրն առավոտ գտնվել է հերթապահության մեջ: 2019 թվականի փետրվարի 08-ին, ստացիոնար բուժօգնություն ստանալու նպատակով հիվանդանոց է տեղափոխվել Գյումրի քաղաքի բնակիչ, Լիպարիտ Գրիգորյանը ով գտնվել է ագրեսիվ վիճակում: Ժամը 16:45-ի սահմաններում հիվանդը դուռը բացելու նպատակով սկսել է սպառնալիքներ տալ, որ իրեն կվնասի: Լսելով հիվանդի կողմից հնչեցված սպառնալիքները, ինքը զանգահարել է հոգեբույժ Մխիթարյանին, ով իրեն ցուցում է տվել չափել հիվանդի ճնշումը, անհրաժեշտության դեպքում ներարկումներ կատարել: Տվյալ ժամանակ հիվանդը գտնվել է միջանցքի մուտքի դռան դիմաց, որտեղ ներկա է եղել նաև ճաշարանի աշխատակից՝ Գոհարը: Երբ ինքը հիվանդ Լիպարիտի ճնշումը չափելու նպատակով վերջինիս իր մոտ է կանչել և փորձել է բարձրանալ երրորդ հարկ, այդ ժամանակ Լիպարիտը գալով իր հետևից, բռնել է իրեն, մի փոքր վեր բարձրացրել և հարվածել է իրեն գետնին, ինչի հետևանքով էլ ինքը ստացել է մարմնական վնասվածքներ:

Համաձայն դատաբժշկական փորձաքննության թիվ 0044/հ եզրակացության՝ Քնարիկ Մովսեսի Ասլանյանի ստացած մարմնական վնասվածքը՝ /ըստ բժշկական փաստաթղթերի/ <<Գանգի փափուկ հյուսվածքների սալջարդի ձևով>>, հասցվել է բութ առարկայով, հնարավոր է որոշմամբ նշված ժամկետում, հանգամանքներում առնվազն մեկ ներգործության հետևանք է և առողջությանը թեթև վնասի հատկանիշներ չի պարունակում:

13.05.2019 թվականին որոշում է կայացվել Լիպարիտ Արտաշեսի Գրիգորյանի առաջադրված մեղադրանքը փոփոխելու մասին և նույն օրը նրան մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա «անձի հակասոցիալական խանգարում, ցնորազառանցանքային համախտանիշ, սուր փսիխոմոտոր գրգռվածություն» ախտորոշումով հաշվառված լինելով «Գյումրու հոգեկան առողջության կենտրոն» ՓԲ ընկերության հոգեբուժական դիսպանսերում և 2019 թվականի փետրվարի 08-ից գտնվելով ստացիոնար բուժման մեջ, նույն օրը ժամը 18:00-ի սահմաններում դիսպանսերի երրորդ հարկի միջանցքում հերթապահ բուժքույր Քնարիկ Ասլանյանի մասնագիտական գործունեությանը՝ իր ճնշումը չափելուն խոչընդոտելու նպատակով՝ կքանատած դիրքից վեր կենալով մոտեցել է նրան և վերջինիս առողջության համար ոչ վտանգավոր բռունություն գործադրելով՝ հետևից գրկելով բարձրացրել է վերև և դիտավորությամբ հարվածել գետնին՝ Ք.Ասլանյանին պատճառելով առողջության թեթև վնասի հատկանիշներ չպարունակող «գանգի փակ հյուսվածքների սալջարդի ձևով» մարմնական վնասվածք:

Այսպիսով, Լիպարիտ Արտաշեսի Գրիգորյանը մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 130.1-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանրության համար վտանգավոր արարքը մեղավորությամբ կատարելու համար:

Նկատի ունենալով, որ քրեական գործով մի շարք հարցեր պարզելու համար անհրաժեշտ են դատական հոգեբուժության բնագավառների հատուկ

մասնագիտական գիտելիքներ, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 243-246-րդ, 248-րդ հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. 18152019 քրեական գործով նշանակել ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել ՀՀ Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերի դատահոգեբուժական փորձագիտական հանձնաժողովի փորձագետին, նրանց նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-342-րդ հոդվածներով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

2. Փորձագետների պարզաբանմանն առաջադրել հետևյալ հարցերը՝

- Մեղադրյալ Լիպարիտ Արտաշեսի Գրիգորյանը նախկինում և հանրորեն վտանգավոր արարք կատարելու պահին հոգեկան հիվանդությամբ տառապել է, թե ոչ, եթե այո, ապա ինչպիսի հիվանդությամբ է տառապել և երբվանից:

- Եթե Լիպարիտ Արտաշեսի Գրիգորյանը տառապել է հոգեկան հիվանդությամբ, ապա այդ հիվանդությունը զրկել է արդյոք նրան իր գործողություններին հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակությունից:

- Լիպարիտ Արտաշեսի Գրիգորյանը ներկայումս տառապում է որևէ հոգեկան հիվանդությամբ, թե ոչ, եթե այո, ապա՝ ինչպիսի:

- Եթե Լիպարիտ Արտաշեսի Գրիգորյանը տառապում է հոգեկան հիվանդությամբ, ապա այդ հիվանդությունը զրկում է նրան ներկայումս իր գործողությունների համար իրեն հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակությունից, ինչպես նաև վերջինս կարող է մասնակցել քննչական և դատաքննչական գործողություններին:

- Լիպարիտ Արտաշեսի Գրիգորյանը մեղսունակ է, սահմանափակ մեղսունակ, թե անմեղսունակ:

- Լիպարիտ Արտաշեսի Գրիգորյանը հարկադիր բուժման կարիք ունի, թե ոչ, եթե այո, ապա ինչ տիպի հոգեբուժական հիվանդանոցում, հանրության համար վտանգ ներկայացնում է, թե ոչ և հակացուցված չէ արդյոք բուժումը:

3. Փորձագետներին վերջիններիս պահանջով տրամադրել քրեական գործի նյութերը և վերջիններիս պահանջով փորձաքննության կատարման վայր կներկայացվի փորձաքննվող Լիպարիտ Արտաշեսի Գրիգորյանը:

Ավագ քննիչ՝ **Գ.Հ.Թորոյան**